ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

01.04.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Մ.Սարգսյանը, Կ.Շեկոյանը, Գ.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետն անդրադարձ կատարեց նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված աշխատանքներին, տրված հանձնարարականների կատարմանը և առաջիկայում նախատեսված ծրագրերին:

2. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց ոլորտում իրականացված աշխատանքների, նաև որպես տեսլական քննարկված և ներկայացված ոլորտի զարգացման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ «Վանաձորի ԲԿ» -ում, «Տաշիրի ԲԿ» -ում առաջարկվող իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ:

Վերոգրյալի առիթով մարզպետը հանձնարարեց ներկայացնել առավել կարևոր նշանակություն ունեցող, արդիական, նաև՝ երկարաժամկետ և իրագործելի ծրագրային առաջարկներ:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց ոլորտում նախատեսվող կրթամշակութային միջոցառումների զարգացման ծրագրերի առաջարկություններ, որոնք կարող են իրականացվել մարզային մակարդակով, մասնավորապես՝ երիտասարդ նկարիչների ցուցահանդես, ազգային ժողովրդական - պարային փառատոն, ազգային նվագարանների մրցույթ - փառատոն, «Վարդավառի» և «Նավասարդի» տոնակատարություններ, ինչպես նաև երիտասարդության կրթամարզամշակութային մարզային փառատոն, որը կարելի է անցկացնել Վանաձորի «Ծիծեռնակ» ճամբարում:

Այդ առիթով մարզպետը հայտնեց իր դիտարկումները, մասնավորապես կարևորեց կրթադաստիարակչական գործընթացում իրականացվող աշխատանքները, առողջ կրթական և բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումն ու պահպանումը, ինչպես նաև

երիտասարդների ներգրավմամբ իրատեսական և արդյունավետ տարաբնույթ միջոցառումների կազմակերպման, մշակութային կյանքի ակտիվացման անհրաժեշտությունը:

Վերոգրյալ ծրագրերի, ինչպես նաև ներկայացվելիք ծրագրերի վերաբերյալ իր մոտեցումներն ու տեսակետները հայտնեց մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Կ.Շեկոյանը, նշելով, որ այդ և այլ նմանատիպ ծրագրերի իրականացման համար ինքը անհրաժեշտություն է համարում տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը, ռիսկերի և ֆինանսական միջոցների գնահատումը, դրանց իրագործման ժամկետները և արդյունավետության աստիճանը: Առաջարկեց նաև անհրաժեշտության դեպքում այդ ծրագրերի քննարկմանը մասնակից դարձնել սոցիալ-հոգեբանների և այլ կառույցների ներկայացուցիչների:

Ներկայացված դատողությունների ու առաջարկությունների վերաբերյալ իր տեսակետը հայտնեց նաև Լոռու մարզպետը, ընդգծեց, որ ներկայացված բոլոր ծրագրերը պետք է միտված լինեն մարզի զարգացմանը, ինչպես նաև համահունչ լինեն ՀՀ Կառավարության կողմից ըստ ոլորտների տարածքային զարգացման ռազմավարությանը:

Մարզպետը հանձնարարեց՝ կրկին անգամ ուսումնասիրել ոլորտային զարգացման բոլոր ուղղությունները, ակտիվ քննարկումներ իրականացնել առաջիկա տարիների համար զարգացման ծրագրեր մշակելու ուղղությամբ և 1- շաբաթյա ժամկետում ներկայացնել իրատեսական, հեռանկարային և արդյունավետ ծրագրային առաջարկներ:

4. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ՝ Մ.Դալլաքյանը, Մ.Խեչումյանը, Գ.Բաղդասարյանը, Ա. Թումանյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

5. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների, ինչպես նաև 2025թ. սուբվենցիոն ծրագրային հայտերի ներկայացման մասին տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց՝ հետևողականություն դրսևորել մարզի համայնքներից 2025թ. համար նախատեսված սուբվենցիոն ծրագրերի փաթեթները Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու ուղղությամբ, ինչպես նաև անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ծրագրերով իրականացված աշխատանքների համար վճարումների կատարման ուղղությամբ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-04-03 10:10:58 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99